ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2023 թվականի N 985-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 5-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԴԵԿՈՐՊՐՈՖ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 10-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» ցանկը 21-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22-23-րդ կետերով՝

«

22.	3916200000	ՊՎՔ պրոֆիլներ	ՊՎՔ պրոֆիլներ ոչ լամինացված դուռ-պատուհանի համար	կգ	450 000	Գերմանիա, Իտալիա, Չինաստան, Թուրքիա, Բելգիա, Լեհաստան, Ավստրիա, Իսպանիա, Թայվան, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Ռումինիա, Իրան, Հունաստան, Մեծ Բրիտանիա, ԱՄԷ, Չեխիա, Հարավային Կորեա, Վրաստան	Գերմանիա, Իտալիա, Չինաստան, Թուրքիա, Բելգիա, Լեհաստան, Ավստրիա, Իսպանիա, Թայվան, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Ռումինիա, Իրան, Հունաստան, Մեծ Բրիտանիա, ԱՄԷ, Չեխիա, Հարավային Կորեա, Վրաստան	256 500 000	
23.	7216918000	Ցինկապատ պրոֆիլներ	Ցինկապատ պրոֆիլներ սև մետաղից՝ հարթ գլանվածքից ստացված, դուռ-պատուհանի համար	կգ	350 000	Գերմանիա, Իտալիա, Չինաստան, Թուրքիա, Բելգիա, Լեհաստան, Ավստրիա, Իսպանիա, Թայվան, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Ռումինիա, Իրան, Հունաստան, Մեծ Բրիտանիա, ԱՄԷ, Չեխիա, Հարավային Կորեա, Վրաստան	Գերմանիա, Իտալիա, Չինաստան, Թուրքիա, Բելգիա, Լեհաստան, Ավստրիա, Իսպանիա, Թայվան, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Ռումինիա, Իրան, Հունաստան, Մեծ Բրիտանիա, ԱՄԷ, Չեխիա, Հարավային Կորեա, Վրաստան	126 000 000	».

2) հավելվածով նախատեսված ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «22 408 159 000» թիվը փոխարինել «22 790 659 000» թվով.

3) հավելվածով նախատեսված ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «22 421 599 000» թիվը փոխարինել «22 804 099 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ